

« ինքեան առնէ . նոյնպէս զանդամս մարմնոց
 « կերպաւորէ, զլիւս լարէ, զերակս փորէ,
 « և զկայուն սկերս ուղղածով ընու : Գպու-
 « թիւն այսր երկազօր ծծմբաղանսկիտս սեր-
 « ման՝ յայտնապէս երեւի յաստուածաշունչ
 « սուրբ զրոց՝ ուր ընթեռնումք : Եւ ասաց
 « Աստուած րդիեացէ երկիր զբանջար խոտոյ
 « սերմնարար, ըստ ազգի և ըստ նմանու-
 « թեան, և այլն : Առաւելապէս գտանի ծծմբ-
 « բաղանդկեայ սերմն յերակս և ի գաղ-
 « աազնաց խողովակս, յայսր և ի խորշս հօ-
 « զոյն, որ յարգանդի իւրում՝ ունի դարանս
 « հրոյ, յորջանս (յորձանս) չրոյ, ծոցս օդոյ-
 « և հետեւապէս առաւելութիւն յոյովածեղծ
 « ծխոց զոյրեաց շօգեաց և ծծմբաղաւորդ-
 « կեայ շնչոց, ուստի զոյանան ամենայն
 « հանք » :

Քանի մի երկնից և տարեբաց վրայօք հա-
 տուածներ այլ գրելէ ետեւ՝ կու գառնայ Ա-
 տեախք իր վրայ . « Այսբանս փօքր ի շատէ
 « Աւետիք ընթերցողի ծնունդ Տիգրանակեր-
 « տեան՝ կենսամաշ աշխատութեամբ ի բազում
 « ժամանակաց հետեւեալ՝ արարի զերկնային
 « և զերկրային բոլորակագունդս, ժողովեցեալ
 « ի գրոց և ի մեկնութեանց աստ ի մի տեղի,
 « վասն իմանալոյ զգասակարգութիւն բոլանս-
 « զակ երկնից իմանալեաց և զգալեաց՝ ըստ
 « մեծին Գիտնեսիեայ (Արիտպագացոյ) և
 « հաւաստի փիլիսոփայից, եզի զշարք բոլո-
 « բակացս, զոր մեծ օգուս է ուսանել . քան
 « զի ախմարք և անվերահասութ՝ անհմուս
 « զոյով յայսմ արուեստի, ամենայն ոք ըստ
 « իւր կարծեացն և գրաստախել իմացմամբ
 « այլեւայլ բարբառնանս յօդեալ հաստատեն
 « և մոլորեցուցանեն զմիամիտսն . սակս այն
 « զբեցուս յայս բոլորակս պարզարանութեամբ,
 « և զշարժուն և զանշարժուն կամարքն՝ զոր
 « տեսեալ յայսմ թղթոյն՝ իմացին զդիրքն
 « երկնի և երկրի, և մի հեթանոսարար ա-
 « ռասպեղաբանեացն զգործս Աստուծոյ » :
 « Յետոյ ռամկարար կ'աւելցընէ իբրեւ ի տեֆ-
 « տերի գրելով և ի պէյազին փոխելով, առանց
 « անուններն ու թուականքը գնելու . « Եւ եղեւ
 « սա ի ինդրոյ Ֆլան (փոխանակ այս անուն
 « ըռելու) քաղքցի խոճա Ֆլանին, որոյ մահ-
 « տեար Ֆլանի . ի թլականիս Հայոց մեծաց

« Ֆլան ամին, թիւն դիր, ի Ֆլան ամսոյն .
 « ի մեծախումբ քաղաքն Ֆլանն, որ այժմս
 « կոչի Ֆլանն, ի նուաստ հուսկ յետին Ֆլան
 « ապիրատէ . Եւ որք տեսեալ ուսցին ի ար-
 « մանէ և օգտեալ շահեցոյին ինչ ի սմանէ՝
 « տացեն փառս սքանչելագործ արարչին Աս-
 « տուծոյ, որ միով բանիւ կազմեաց զկա-
 « մարքս . Ասաց և եղեւ, հրամայեաց՝ և
 « հաստատեցանս : Օրհնեալ է Աստուած » :

Առէլ ետեւ լուսնի աղիւսակ մի գնէ և
 ապա վերոյցրեալ գիտնական զըռուծին ոճով
 աւելի երկայն հաստուած մի՝ հանգրձ խորա-
 գրով . « Պրակ Երկրորդ հասոր Մահմանին
 « Տարեբարանութեան . Յաղագս Որակու-
 « թեան » . և այլն, զըռուծին վերջն կարուած
 է, և կարծեմ յալորդ թուղթն այլ պակտի :
 Յետոյ դարձեալ կամարաց վրայօք, այլեւ-
 այլ աղիւսակք և ուսումնական աշխարհագրու-
 թեան կամ երկնագիտութեան բանք պի-
 տանիք և անպէտք, մինչև յԱխտարան :
 Գարայարեցի

Վ Ա Ն Ա Յ Ե Ո Վ Ա Կ Ի Կ Ղ Զ Ի Ն Ե Ր Ը

Ա Ղ Թ Ա Մ Ա Ր

(Շար . յէջ 203)



Ա Ղ Զ Ա Պ Է Ս եկաւ հասաւ Գագկայ
 արծրունոյ, բարեպաշտ թամար
 թագուհոյ և միանգամայն բոլոր Աղ-
 թամարոցը ըղձալի օրուան նախընթաց
 իրկուներ : Ամենայն պատրաստութիւնք
 լիուլի եղած էին, ըստ կարի ճոխ և վայե-
 լուշ կերպով կատարելու երկրորդ աւար մեծ
 հանդէսը : Ոչ միայն Աղթամարը գեղաբոլ-
 ըջ հարսի մը պէս զարդարուած կը սպասէր
 այդ հանդիսական աւար, այլ և զարդարուած
 էին ծովակի բոլոր նաւերն, զարգարուած էին
 նաև Ոստանայ ծառայողք ճանապարհչն ,
 զարդարուած էր և նոյն քաղաքի կապանն :

Ոստանայ արքայական անոտատանց պալատ-
 նեայք ևս աշխոյժ և զործօնեայ դրութեան
 մէջ կը գտնուէին նոյն իրիկուքը : Ոմանք
 թագաւորի ոտիկակազմ մեծ կտաքը զուր
 էին բերեր կառասանէն և կը զարդարէին կը
 կահանորէին . այլք ձեռք զարդարանքներ կը
 մաքրէին, կը փայլեցընէին, կարգի կը գնէին :
 Երեւի զոցա աշխատութիւնն այլ էր զուր չէր,
 երեւի արքայական կտաքն և ընտիր ընտիր
 ձիերն այլ իրենց արծաթապատ զարդարանք-
 ներով շուք պիտի տային Ալթամարայ տա-
 նայի նաւակատեայ տօնին : Այս, Ոստանն
 այլ հաղորդ պիտի լինէր Ալթամարայ մեծ
 հանդիսին , իւր հովանաւոր ծառերով և ար-
 ծրունեան զրօշակներով զարդարուած ճանա-
 պարհաց միջէն պիտի անցնէր նոյն ժամա-
 նակ իշխմածին նստող մեր աշխարհի ընդ-
 հանուք հայրապետն Գեորգ ¹, որ լսելով
 արժրունի թագաւորի մեծագործ շինուածոց
 հաշիւը, նա մանաւանդ հոյակապ տաճարի

կառուցման աւարտին , կ'ազգը ներկայ լինել
 նոյն տաճարի նաւակատեայ հանդիսին : Հայ-
 րապետի փութաբը վաղուց յայտնի լինելով
 Գաղկայ, նախապէս ամենայն պատրաստու-
 թիւնք սեռած էր , մեծ հանդիսով և ար-

զի նոյն հայրապետը 876ին* վախճանած է,
 ինչպէս կը նշանակեն հայ պատմագիրք և
 մանգ. որմէ կ'երևի որ Յ. Տ. Գեորգ Բ.
 921 թուականէն շէ տարի առաջ վախճանած
 էր : Եթէ 921 թուականը կամ հայրապետին
 անուր թագաւորական սխալ նկատելով զէպ է
 ետ դառնանք, յայնժամ Գաղիկ Արժրունի թա-
 գաւոր չենք կրնար գտնել ի Ասպուրական,
 որ Ալթամարայ յատուկ եղիկակոտապետ ձեռ-
 նադրել տայ, վասն զի Գաղիկ Արժրունի 908
 թուականին թագաւոր եղած է . և եթէ զէպ
 յառաջ երթնուք՝ կը գտնենք Տ. Տ. Գեորգ Բ.
 հայրապետին յարորդ Տ. Տ. Յովհաննէս Չ.
 պատմաբան հայրապետը, որ 924 թուականին
 վախճանած է ի Ասպուրական : Այս օրինակ
 շեռողութիւնք կարող են ընել առ հասարակ
 այն ամենայն բանտերք, որոնք զուրկ են հեռ-
 գոյն զրչափր ազբերներէ, և անշուշտ մեծաբ-
 օղ հեղինակն, եթէ ունենար իւր զիժացը Ալ-
 թամարայ կոնդակն և մնացորդքն ժամանակա-
 դրութեան, այն ժամանակ բարբոսին այլ կեր-
 սով կ'ընէր իւր քննական շեռողութիւնն :
 Մենք ինչ հետեւինք Ալթամարայ կոնդակին,
 ժամանակագրութեան մնացորդաց և կաթողի-
 կոսաց շարքին, այն ատեն, այն 921 թուին
 յերևած Գեորգ հայրապետն չենք կարող հա-
 մարել նոյն ընդ Գեորգ Բի Գառնեցոյ, զի
 Գեորգ Բը մաքրածած է ի զահն հայրապե-
 տական Բ Գուհին 876ին. մինչդեռ այս Գեորգը
 ըստ կոնդակին . . . « Էր ազգակից Մայթոց կա-
 թողիկոսին, որ նստեր յիշխմածին, և նստա-
 փոքր մի ժամանակ » . և ըստ ժամանակագրու-
 թեան, « Ըսկ հայրապետն Հայոց էր Տէր Գեորգ,
 որ ազգակից էր Մայթոց կաթողիկոսին, որ
 նստեր յիշխմածին » : Արդ այս երկու վկայու-
 թիւններէն ևս յայտնի կը տեսնուի որ բար-
 բոսին այլ է Ալթամարայ եղող Գեորգ հայրա-
 պետն, որ փոքր մի ժամանակ նստած է ի զահ
 հայրապետական յիշխմածին : Թէ քննութեան
 կարօտ և թէ մտքի և տարակուսական շատ
 կետեր մեր առջև կը հանեն Ալթամարայ յի-
 շեակ զրչափրք : Եթէ վտաս է լինինք զոցա
 հարազատութեան, որոց միայն ընդօրինակու-
 թիւնք ունիմք, և սկզբնազիրքն չեն առ մեզ,
 որ ըստ այնմ ընէինք մեր շեռողութիւնք, այն

1. Առտ Թերևս հարցումի էր գիտնոց թէ ու-
 տի յերևան կը հանեմ 921 թուականին մէջ
 Գեորգ անուամբ հայրապետ մը, որ նստած
 ըլլայ յիշխմածին, զի մեր ազգի ժամանակա-
 դրութեան, մինչև ցարդ հրատարակուած կա-
 թողիկոսաց շարքի և պատմութեան մէջ, այս
 թուականին յիշխուի Գեորգ անուն կաթողիկոս
 ոք : Բայց այս առաջին անգամ չէ որ Ս. Ա. Ղա-
 դարու տպագրատան ժամանէն ի հրատարակ կը
 հանէ այսպիսի անուամբ կաթողիկոս մը. զի
 առաջին անգամ 1872 թուականին Մեծ. Հ.
 Աւանդ Վ. Ալիշու իւր Շմորնայի և Պարսա-
 գայ ինչ զրուածքի, որ նախ մասն առ մասն
 է Բազմախիպի տպուեցաւ և ապա 1873 թուին
 Թեան սկիզբն հասարակ մը հրատարակուեցաւ, Ալթ-
 րամարայ ապստամբորդիան վերնազրով հինգե-
 րորդ զևնոյն մէջ, Ալթամարայ կաթողիկոսու-
 թեան սկիզբն մինչև 921 թուականը հինգերեւոյ
 կ'ըսէ : Գեորգ կաթողիկոսն զերօրօրքին
 Գաղկայ Սիւրէն ձեռնադրէր (յամբ 921) եղիկու-
 տապետ բարբոս վանայ ծոփուն չորս բարբ-
 օսահմանաց » : Այս սողերու վրայ Գեր. Մատ-
 թեոս Եղեկոսագոս իւրմիւրեան, 1882ին ի Կ. Պո-
 լիս տպագրած Հայրապետորդիան Հայաստա-
 նեայց Առաքելական Մոռար Եկեղեցոյն և Ալթ-
 րամարայ ու Սիս վերնազրով զբէր 284 էջը,
 ժանօթութեան մէջ, քննական շեռողութիւն
 քը ըրած է, ցուցնելով և անհամաձայն զր-
 անելով 921 թուականին և Գեորգ հայրապետի
 մէջ, ըսելով . « Գեորգ Բ. հայրապետը չէր կըր-
 նար ըլլար զանի (զՍիւրէն) ձեռնադրող, վասն

* Անոնոս տպագրական սխալման Գեր.
 Հեղինակի գրոց մէջ Գեորգ Բ. հայրապետի
 մահուան թուականի տեղ, որ պատահած է
 897ին, դրոսած է 876 հայրապետական գտնը
 նստելոս թուականը :

ժամավայել կերպով ընդունելու, ընդհանուր ազդի մեծ հայրապետն : Արդէն նաւակաւ տեսաց օրը չհասած, ոչ միայն վառարարականցիք, այլ և բոտ ժամանակադրութեանն, յամենայն նահանգաց չայց, բազմաթիւ ժողովուրդք կու գային ի տես հրաշակաւոյց տաճարին, և զմայմամբ և սքանչացած կը գրուատէին արծրունի թագաւորի իմաստութիւնն և հանճարը :


Մեծ աւուր նախընթաց զուարթ իրիկունը կ'անցնի ամենայն արագութեամբ, կը յաջորդէ մահիկ լուսնի հեղիկ լուսով և բազմաթիւ փայլիւն տասողերով զարդարուած դիւր մը, յորում ոչ միայն Աղթամարաց, այլ և շրջակայ բնակչաց մեծամասնութիւնն անցուց կէս քուն կէս արթուն. մինչև հուսկ ուրեմն արեւելեան երկնից կամարն սկսաւ ներկիլ ի ծիրանի, և կամաց կամաց իւր վիթխարի ոսկեճառանց ճառագայթներ արձակող գլուխն ի վեր բարձրացրնել տունիեան թալաւորն և լուսատուն արեւեղերաց : Այդ պահուն սուրահնդակ մի կը հասնի յյստան և մտնելով արագասան մակղոյի մը կը կը փութայ զկէպ ի կղզին. զա եկած էր կաթողիկոսական

բանակէն յայտարարելու թէ մերձ է հայրապետի խումբն Ռատանայ կապանին, և քիչ ատենէն կը հասնի : Թակոյն արբունեաց իշխաններէն մին ընդ առաջ կ'ենէ տարբային և կը հարողտ սուրհակալի բերած աւետարին : Բելօր կղզին կը տարածուի հայրապետական բանակի Ռատանայ կապանին մերձ լինելուն լուրը : ամէն մարդ իւր ամենական արդ՝ ձեռքդ կը զգենու, զինդուրականք այլ հանդիսական աւուրց յոտուկ համազգեստներով կը զարդարուն : Կղզւոյ նաւահանգստէն մինչև արբայական նորաչէն Կապանքը, զոս դաս կը շարուին դիւրուորական բանակներն, ձևացընելով երկու 'մարտիկէն' : Գոտար պարսկիներ, և մէջ տեղէն թողւով շայն ճանտպար մը, ոսկից պիտի անցնէր արբայն, մտնելու ի նաւ : Ընդ առաջ երթալու մեծ հայրապետին : Անա՛ երաժշտաց առաջին խումբն կ'սկսի ժամանակի յատուկ մի ներգաշակ և սրտադրաւ եղանակ : Աղթամարայ բնիկ ժողովուրդը և օտար այցելուք խուրճակութեամբ կը դիմեն զկէպ ի արբայն ապարանից դիմաց տարածուած հրապարակը : և մինչդեռ արբայն ոսկեհիւս բեհեզներով զարդարուած և թանկագին ականակուտ թաց ի զլուխ, շրջապատուած բազմաթիւ իշխաններէ և հոգեւորականներէ զուրս կ'ենէ յապարանից, հաղարատը հայկականց կեցցէնիւր կը խառնուին երաժշտական փողոց հընձանց հետ : Եր փութայ արբայն հայրական ողջոյնն կու տայ իւր սիրելի ժողովրդեան և զօրաց, կերպով մը ուզելով յայտնել, որ զպղին այդ զովասանական կեցցէներով օրը թընպացնելէ : զի նա անշուշտ աւելի յարմար կը համարէր այդ օրինակ կեցցէներ բնութենէ : մեր աշխարհի մեծ հայրապետի հետ և կղզին դերադառնալու ժամանակ : Սակայն ի գո՛ւր կը թագաւորի ի փառաց հրաժարելու այդ փոխելի ջանքն, զի ժողովուրդն այնչափ զբաւուած էր նորա հայրական սիրով և այնչափ սքանչացած էր նորա հանճարով, որ օրերով առաջ մտադիր էր այդ մեծ հանդիսաւոր աւուր մէջ, եթէ ոչ այլ իւրք : զէթ անըդհատ կեցցէներով փառաւորել իրեաց անխնջ թագաւորն, և այլպիսով կերպով մը յայտնել իրենց փոխադարձ երախտագրուած

ատեն պէտք ենք համարել առանց տարակուսանաց վերոյիշեալ Գեորգ հայրապետը : բոլորովին նոր և մինչև ցարդ անյիշատակ մնացած և մինչև անգամ չըստուած ի շարս կաթողիկոսաց : Թէ ի՞նչ պատճառաւ այնպէս անժանօթ մնացած և հայրապետին անունն, այդ ուրչելը մեզ առ ժամս անհնարին կը թուէ, զի ի պատմութեանց մինչև ցարդ մեզ ծանօթ նոյն ժամանակի վերաբերեալ զէպք և թուականք մեծաւ մասամբ անհամաձայն են միեմանց և կարօտ քննութեան : 897 թուականէն մինչև 928 Իրան կաթողիկոս կը յիշուէ Յովհաննէս Զ. Կրանխանակերտցին, որ մեր աշխարհի առաջին զրութիւնն տեսնելով և չկարենալով հանդուրժել, խոյս տուաւ զէպ ի Արատան Ատրնեբեան թագաւորի մօտ. այս միջոցին անշուշտ նստեր է ի զան հայրապետական վերոյիշեալ Գեորգը, և մի անհշտն և ոչինչ ժամանակ զահը նստելուն պատճառաւ չէ՛ յիշուած և ի շարս կաթողիկոսաց, ինչպէս ինն յիշուած նաև ուրիշ այսօրինակ կաթողիկոսունք : Առ ժամս այսչափով բաւականանա՞նք 921ին յիշուած Գեորգ հայրապետի մասին, թերևս ժամանակն և նորահոգ հետազօտուութիւնք, ապագային մէջ աւելի պայծառ տեղեկութիւններ մեր առջև հանեն :

Թիւնն է սէր: Արքայական խումբն անընդ-
հատ երգերով թափօրով կը հասնի ի ծով-
եզրն, ուր փառաօրայէն զարդարուած կ'ըս-
պասէ թագաւորական նաւն և այլ բազմաթիւ

նաւակներ, ամենքն այլ զարդարուած զբոյսակ-
ներով և ժողկամբք: Թողունք արքայն և
հետևորդք, որ մանելով ի նաւ դիմեն դէպ
յՈՍՏԱՆ, և մենք սակաւիկ մը զբաղինք այն



ԵՂՔԵՐՄԵՐՈՍ ՎԵՆՊԷ

հարցով, թէ արդեօք սոյն 921 թուականիս
կը գտնուէր յԱղթամար վանք և միտրա-
նութիւն կրօնաւորաց, թէ ոչ: Թէև որո-
շակի զբաւոր յայտնի վկայութիւն չունինք

հաստատելու թէ այս ժամանակ կային յԱղ-
թամար միանշունք, սակայն հաւանականա-
բայն է, որ արծրունի թագաւորը, կղզւոյս
վրայ այնպիսի հրաշակերտ տաճար կառուցա-

ներէ վերջ, նոյն տաճարի աստուածային պաշտամունք անխափան կատարելու համար այլ, հաստատած ըլլայ մասնաւոր պաշտօնեայք և միանձուռք. և կամ լաւ ես, ի Տէր Եղիայէն Աղթամարը առած ժամանակ, նորա միաբնութիւնն ոչ ի սպառ դուրս հանած ի կզղայն: Այս մասին քիչ մը լոյս այլ կրնանք ստանալ ժամանակագրութեան պատարիկէն, որ կ'ըսէ. « Իբրև լուս աբբայն (հայրապետի Ոստանայ կապանին մերձ լինին), զարդարեաց զամենայն փողոցս ի պատիւ հայրապետին, մանաւանդ զինքն և ըզզօրս իւր և վարդապետքն որ անց էին, նոյնպէս Տէր Եղիշէ արքեպիսկոպոսն. և ապա նստան ի նա »: Արդ սոյն տողերու մէջ յիշուած վարդապետներն, ինչ հաւանական կը թուի կարծել, Աղթամարայ վանաց միանձուռք, և Տէր Եղիշէն այլ անշուշտ այդ վանքի ձեռնադրող արքեպիսկոպոսն: Գրանանք վերստին մեծ աւուր մեծ հանդիսի նկարագրին: Աբբայական նաւն շրջապատուած ուրիշ բազմաթիւ մակոյկներէ կը մերձենայ Ոստանայ նաւահանգստին, ուր բազմութիւն մը իշխանաց, հոգևորականաց, զօրականաց, քաղաքայնոց և այլն, և այլն, դաս դաս բաժնուած իւրաքանչիւր ոք ըստ իւրում աստիճանի, կը սպասուր արքայի զալստեանը: Ոստանայ արքայական հրոշակերտ ապարանից բարձր աշտարակներէն կախուած օդոյ մէջ կը սաւառնէին մետաքսահիւս երկու մեծ արծուէնչան զրօշներ, նոյնպէս կախուած էին աստիճանաբար մեծ և փոքր զրօշներ Ոստանայ ամրոցը շրջապատող պարսպի աշտարակներէն: Հրաշալի կերպով զարդարուած էր և նաւահանգստի դուռն, ուսկից ի ցամաք պիտի ելնէր արքայն. անուշահոտ ծաղկանց ամենաընտիր տեսակի սիւսուած էին ծառազարդ ճանապարհի վրայ, ձեւացընելով մի ճարտարագործ բազմերանց բնական գորգնաւահանգստէն մինչև կապանը, կը շարունակուէր այդ ծաղկազարդ գորգն: Ընանապարհի երկու եզրերները անկուած հովանաւոր ծառերն այլ արդէն զարդարուած էին իրենց բնական դաւարաբեղ տերևներով և սպիտակ ծաղկըններով. նոքա թէ և պէտք չստէին այլ ուրիշ զարդարանաց, սակայն պար-

աւուր էին, ի պատիւ մեր աշխարհի մեծ հայրապետի և արծուների արքային, իրենց վերայ կրել մի մի զրօշակ և Բագմապառա Վասպուրականի իւրաքանչիւր քաղաքներէն և գիւղերէն, օրերով առաջ հրախրուած էին այն ամենայն քահանայք, օսրկաւագունք և դպիրք, որոնք քաղցրածայն և աղոյակ էին երգելու շարականաց ընտրելագոյն եղանակները: Այս հանդիսին աւելի շուք տալու համար, ծառազարդ ճանապարհի երկուտեք, ձեւացուցած էին երկու երկայն շղթաներ, արքունի սուսերակիր զօրքերը. իսկ զինուորական երաժշտաց խմբերն ամբողջ միացած, ձեւացուցած էին մի մեծ խումբ: Նաւահանգստէն անմիջապէս քանի մը քայլ հեռու լայն ճանապարհի մէջ տեղ, իւր ամենայն շքեղութեամբ պատրաստ կ'սպասէր թագաւորի զայստեան, արքունական սակաբ, թագմ մեծ կառքը: Թագաւորական խումբը, Ոստանայ զինուորական երաժշտաց ողջունատուութեան եղանակով մը դուրս կ'ենէն ի նաւէն. թագաւորի հետ մի քանի պատուարժան անձինք կը մասնն կառքի մէջ, իսկ այլք կը հեծնեն առաջուց պատրաստուած և թամբուած ընտիր ընտիր ձիերու վրայ, որոց մէկ մասը արքայական կառքի զիմացը և միսն այլ ետևի կողմը կը կենայ: Ժողովրդեան մէկ մասն ևս կ'անցնի կառքի առէկի կողմը, և միսն ետևի, այնպէս որ արքայի կառքը կը մնայ ամբողջ բազմութեան մէջ տեղը: Այսպէս դասաւորուած յուշիկ յուշիկ յառաջ կը խաղայ արծուների թագաւորի հանգիստաւոր բանակը զկալի Ոստանայ կապանը: Կաթողիկոսական բանակի վրայ տակաւին բան մը չըսինք, շայտենցիցք նաև թէ բուն ինչ պատճառաւ կը թողոյր արարտեան գահը, և թէ իւր հետ ինչ անգին գահձեր կը բերէր Աղթամար: Ոստանայ կապանին մէջ արքայական և կաթողիկոսական բանակն զեռ իւրաքանչիւր հանդիպած, մենք փութանք մի քանի հարկաւոր տեղեկութիւններ առնուլ հայրապետական բանակի վրայ: Գէորդ հայրապետի ժամանակ Գոսնայ կաթողիկոսական գահը մնացեր էր թափուր, զի Տէր Յովհաննէս Գրասխանակերացի հայրապետն, ինչպէս յառաջագոյն ծանօթութեան

մը մէջ տեսանք, իւր աշխարհի տառապանաց չհանդուրժելով, ապաստան էր վերստան Ատրնեբրան թագաւորի մաս: Արդ, մեր աշխարհի իրաց այդ խառնաշփոթ ժամանակ, ո՞ զիտէ ինչ կերպով, ի գահ հայրապետական ամբարձած է 921ին յիշուող Գեորգ հայրապետն, որ ըստ կոնդակին նստած է յԱշմիածին: Ինչպէս կ'երեւի, հազիւ քիչ ժամանակ կարող եղբւր է այն հայրապետս մնալ կաթողիկոսական գահուն վրայ, զի նոյն ժամանակ այլազոր իշխանք ոչ միայն մեր աշխարհական այլ և նոգեպրական իշխանութեան ղեմ՝ սկսան մաքառել: Ընչդ այդ ժամանակ Հայաստանի ամենէն աւելի երջանիկ և խաղաղ մասն էր վապագրականը, որոյ ճակիչք Գազիկ արժուունի իմաստուն և ժողովրդաւոր թագաւորի կառավարութեան տակ, կը վալլէին ամենայն հանգստութիւն: Գեորգ հայրապետն մտածելով ազատել ի նենայ առնորինաց ազգային հայրենասունյ ըրազան նշխարներն, կ'որոշէ ընդ իւր զայնս փոխադրել յԱղիթամար, որոյ անտառիկ և անմաշխելի լինելն ի բազմաց ծանօթ էր իրեն: Որոշ չդիտեմք թէ այս ժամանակ ո՞ր կը պահուէին մեր ազդի սրբազան աւանդներն, ի Գոսիմ, թէ յԱշմիածին. միայն այս մեզ ծանօթ է ի զբնագիր աղբերաց, որ Գեորգ հայրապետը ղէպ ի Աղիթամար յուղի անկած ժամանակ, առաւ ընդ իւր և այլ սրբազան մասունքներն. « Առեալ մասն ինչ ընդ իւր զԼուսաւորչի սուրբ Անն¹ և զԳառազանն և

զՄիթրն և զվականն, և զՍեղանն:՝ սրբաւորաբ աստուածային խորհրդոյն, և զԳօտի սուրբ միթոյն, և զԳառազանն՝ ամենազօր աշոյն՝ որ հոյակէր զԳեորգորդն Տեսան. . . և զՀողապահա աշխատաւոր սոսիչն սուրբ կուսին Հոփիսիմայ, և զճողապատն ներկեալ սուրբ արեամբն, և զհազուկ մարտիբոսին տղային Արզմանէն ազգակցի՝ և

զորի Լուսաւորչի սուրբ Ալըր, բերուած է յԱղիթամար, ոչ ըստ յօդուածագրի կերպատայ դեռ փ դարտ վերերոտեմ, այլ ի սկզբն նոյն գաւրու, հայկազնեան ԳձՁ (= 921) թուահաւերին: 1. Թէ սուրբ Գրիգոր Լուսաւորչի կը գործածէր միթր և կամ միտր, այդ մեզ բուրձորդին անծանօթ է և մ պատմաց ոչ ոք յնշատակէ. բայց այս յայտնի է որ անհարազատ և մտամբ իւրեւրեւրեւրեւրեւր Համարուած Գաշանց թղթոյն մէջ, կը յնշատակուին հետեւեալքն, թ բերանայ Սեղեւսարտի Հաովմայ հայրապետի: « Մեծարեցի զնա (զո. Գր. Լուսաւորչի) ըստ կարի իմում, տալով նմա ղվական իմ պատուական որ էր լեալ սրբոյն Յակովղայ Տեսան եղբորն, առաջնոյ եպիսկոպոսին Երուսաղէմայ. այլ և բնաւ զարքօ հայրապետական անձին իմոյ . . . և զմիթրն իմ սասակ սպիտակ որ էր լեալ փակեղ Տեսան մերոյ Յիսուսի Գրիտոսի: » Այս ժամին թէ և « Բաղմովեց » իւր ներկայ տարւել Ապրիլ ամսոյ Սարհանդակի մէջ, ինչ ինչ զիտեմք թիւններ նրա տակակց, սակայն դեռ հաւատալի տեղեկութեանց կը կարօտանք հաստատելու համար թէ առաջին անգամ փրկչական ո՞ր թուահաւերն սկսաւ ի մեզ միթրի գործածութիւնն:

2. Յովհաննէս կաթողիկոսի Գեորգ Բ հայրապետի թագման տաթիւ գրած հետեւեալ տողերէն « . . . եղին զնա ի քնարանի Չորոջ վանաց՝ որ ի Տոսք, մերձ յԵկեղեցին՝ ուր ետեւել իսկ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ զգաւազանն իւր, և զսեղանն տերունական խորհրդոյն. . . », յայտնի կը անտեսի, որ սուրբ Լուսաւորչի գաւազանը և սեղանը, 897 թուին, յորում վախճանած է Գեորգ Բ-ը կը գտնուէին վաւարականի Տոսք գաւառի Չորոջ վանքի մէջ: Այս ժամին որոշ տեղեկութեանց կը կարօտանք:

3. Կ'երեւի որ Աղիթամարայ կոնդակագրին յայլ և այլ աղբերաց հաւաքելով իւր գրուածքի նիւթն, ուշադրութիւն չէ դրած, և այլպէս կրկին անգամ յիշատակած է սրբոյն Գրիգորի Լուսաւորչի գաւազանը: Կոնդակն կոնդակագրի անուշադրութեան հետեւանք կարելի է համարել միթրն յիշատակութիւնն:

4. Աւերորդ անց զրուած կը իրօք աստ ազգակից ըստը, զի իթէ աստ յիշուած վկայն է մեզ ծանօթ Արզմանն զոր անունը, զարքով առաջ է քան արժուունի Արզմանն և ազգակցութեան նշուլ մ'աղգամ չերեկը:

1. Անցեալ տարւոյ (1896) « Արարատ » ամսագրի Մայիս և Յունիս ամսոց մէջ հրատարակուեցաւ յօդուած մը Կ. Ա. ստորագրութեամբ Սուրբ Լուսաւորչի Աղոյն վրայ: Նոյն ամսագրի Յունիսի 265 երեսը կը կարդաքք հետեւեալ տողերն. « Բագրատունեաց թագաւորութեան անկման և Սեղեւոց հրոսակների պատեանաւ շիտթութիւնների և զազթականութիւնների ժամանակ ա. Ալըր գանուած էր Աղիթամար, ուր տարուել էր մի քանի այլ սուրբ նշանների հետ, ինչպէս երևում է, զեռ փ դարի վերջերում: Այդ ժամին հաւատալի տեղեկութիւններ պակասում են »: Մինք հետեւելով Աղիթամարայ կոնդակի և ժամանակագրութեան, կործեմ կարող ենք իրեն հաւատալի տեղեկութիւններով հաստատել, թէ ինչպէս միւս սրբազան նշխարներն, նոյնպէս և սրբոյ հօրն մերոյ Գրի-

անուանակցի պատու¹ կուրապաղատին, և զայլ ևս նշխարս մարտիրոսացն, և զնշան տէրու նական խաչին² յորոյ վերայ էր կաթուած արեան կենարարին՝ ընդերզուգեալ ոսկւով և մարգարտով » : Այսչափ անգին գանձեր աւարարտեան աշխարհէն բարձած երիվարաց վրայ, և բազմութեամբ եպիսկոպոսաց, վարձապետաց և կրօնաւորաց, Գէորգ հայրապետն կը դիմէր յԱթթամար :

Այլ ևս շատ շերտերնք մեր խօսքը Աւարարտէն ի վասպուրական բերուած սրբանուէր նշխարաց վրայ. ահա կը մերձենան, իբր կը հանդիպին երկու մեծ բանակներն, հայրապետականն և թագաւորական : Մենք այլ փութանք մեր ողջոյնն տանք այդ հանդիսաւոր բանակաց, և խոնարհ համբոյր սրբազան նշխարաց, ու եթէ ոչ ոտիւք զթմօք հետեւելով այդ բազմութեան, երթանք մինչև Աթթամար :

Հայրապետական բանակը, որ թէև գրեթէ իբրև փախստական մեկնած էր յԱրարատայ, սակայն հազիւ թէ ստք կը կոխէ վասպուրականի անդորր երկրի վրայ, բոլորու-

մին կ'այլափոխի իւր գրութիւնը : Վասպուրականցիք լսելով հայրապետի զաւուար, աւանն քաղաքէ, ամեն գիւղէ, ընդ առաջ կ'ելնեն նորա մեծամեծ ընծաներով : Մասնաւորապէս հրաշալի կերպով բեհեզներով և ոսկեհիւս զիպակներով կը զարդարեն այն երիվարաց քամակները, որոց վրայ բարձուած էին սրբազան մասուհներն : Այն ինչ կը մերձենան Ստանայ կապանին, կը կազմեն մի շքեղ թափօր, որոյ առջևէն կ'երթան մի քանի եկեղեցական և իշխանական զրօշակիներ, յետոյ վարդապետաց և կրօնաւորաց խումբ մը, այդ խմբի կը յաջորդէ Զահրէկաւաց մի այլ խումբ, որոց մէջտեղէն կը բերուէին նշխարներն. սրբազան նշխարաց կը յաջորդէր ինքը կաթողիկոսը, շրջապատուած բազմաթիւ եպիսկոպոսներէ, որոց կը հետեւէին նաև ուրիշ երկու խումբ վարդապետաց և կրօնաւորաց, և հուսկ ի վերջոյ, անհամար բազմութիւն մը ձիաւորաց և վասպուրականի ժողովրդոց : Հազիւ թէ թագաւորական բանակի առաջապահը կը նշմարեն հայրապետական բանակի զրօշակիներն, շուտով փողոյ սուր հնչմամբ մը նշան կու տան երաժշտական մեծ խմբին, որ անգէն և անդ կ'ըսկսի հնչեցընել մի հրաշալի եղանակ. թափօրն կանգ կ'առնու իւր մեղմընթաց գնացքէն, կը կենայ նաև թագաւորի կողքը : Հոս ժամանակագիրն կը հրաշանայ թագաւորի խոնարհութեան վրայ, որ իջնելով արքայական կողմէն, ընդ առաջ կ'երթայ Գէորգ հայրապետին, և « իբրև մերձեցան առ միմեանս, կայեալ արքայն զերջանիկ զարդապետն հայրապետին համբուրեր սուշ սուշ » : Յետոյ ընդ հայրապետին կը նստի ոսկիակազմ կառքի մէջ և թափօրն յուշիկ յուշիկ հանդիսաւոր կերպով կը դիմէ մինչև Ստանայ նաւահանդիսար : Այս միջոցին անընդհատ իւրարու կը յաջորդէին շարականաց ընտրելագոյն եղանակներ. բնութեան անձնանուէր երամշտք այլ կարծես այդ պահուն պահած էին իրենց ճոռողական դայլալիկին, այն ինչ յառաջ կը խաղայր թափօրն, իրենք այլ Ստանայ զարարագեղ և կանաչազար ժառոց ճիւղերու վրայն, թնայեալով սստէ սստ, քաջութեամբ իրենց արուեստի ամենայն նար-

1. Պատոս հայացած է յունական πῶτος բառի սեռականէն, որ կըլլայ πῶτος, և կը նշանակէ առաջին. հոս իբրև անական զրուած է կերպապաղատ անուան զիմաց նշանակելով առաջ կամ առաջնակարգ կիշտապաղատի կամ կրօնակալի :

Թէ Արծրունեաց պատմիչն և թէ Աթթամարայ կոնդակագիրն, պատոս կոչարպաղատու անունը կու տան Արդմեհ Սարծրունի իշխանին, որ կ'իշխէր Ամիսկ բերդին և ուրիշ քանի մը տեղերու ի վասպուրական : Այն յայտնի կ'երևի որ կոնդակագիրը Աթթամարայ նաևակաւ տեց հանդիսին ակնատեսն եղած չէ, և ըստ իս, այդ կոնդակն զրուած լինելու է արծրունի Արմեհէնն այլ վերջ, որով կոնդակագիրն, Աթթամար բերուած սուրբ վկային Արդմեհի բազմին յիշելէ վերջ, կը յաւելու նաև, նոյն սուրբ վկայի անուանակց արծրունի իշխանի անունն :

2. Կոնդակագրի անհմտութեան արդիւնք համարելու է ատո յիշատակելն իբր՝ թէ միւս սրբազան նշխարաց հետ Գէորգ հայրապետը բերած է յԱթթամար տերունական սուրբ խաչի մասն : Մինչդեռ Գէորգ հայրապետի Աթթամար եկած թուականէն, որ էր 921ը, շատ տարիներ վերջը բերուած է յԱթթամար վերոյնշեալ սուրբ նշանը ոչ յԱրարատ աշխարհէն, այլ ի Մոկաց, Ապարանից վանքէն :

տարութիւնը կը ցուցնէին, ողջոյն թափօ-
րականաց ականջներն լեցնելով քաղցր և
ներդաշնակ եղանակներով, Քոյոր բազմու-
թիւնն լի էր հրճուանօր և գոհութեամբ,
ամեն մարդ կրքիկները երջանիկ կը համարէր
այսօրինակ հանդիսի մը ներկայ գտնուե-
լուն: Վերջապէս թափօրն կը հասնի Ստա-
նայ ծովեզրը, արքայէն և մեծ հայրապետէն
սկսեալ, ամենքն կը մտնեն ի նաւ և ի մա-
կոյն, և նստութափօր մը կազմելով հեզա-
սան յառջ կը խաղան զէպ յԱղթամար, որ
հրաշլիկ կերպով զարթորում անթիւ կըօշ-
նեցունի և ծաղկազարդ ճանապարհներով, կ'ըս-
պասէր իրենց: Աղթամարայ ժամանակագրու-
թեւնէն քաղենք հետեւեալ նկարագիրն. « Յոր-
ժամ մերձեցաւ նաև անառիկ կզգոյն Աղ-
թամարայ, իսկոյն հնչեցօցին զզանգակն և
Չօրքն թագաւորին առեալ զօտր ի ձեռս իւ-
րեանց փայլեցուցանէին. նոյնպէս շառաչե-
ցուցանէին զպղեղուծս. ճշուճն և որսուճն
կալաւ զերկիրն. շառաչուճն, փայլաւսկուճն,
ձայնը մարդկան, նստալուճն պարուց և եր-
գօցն՝ հիացուցանէր զմարդկային բնութիւն.
այնպէս էր որ ձայնն մի աուտը ձանապարհ
հասանէր»: Այսպիսի փառաւորութեամբ կը
մտնեն ի կզգին թագաւորն և հայրապետ,
բազմաթիւ եպիսկոպոսոսը և իշխանք, վար-
դապետք և կրօնաւորք, աշխարհիկք և զօ-
րականք և և ուզակի կը զիմեն զէպ ի նա-
րակառոյց սաճարը, գոհութեան աղօթքներ
բնելու առ փրկիչն, որ անփնա հասոյց անոր
մեծ հայրապետն: Յետ գոհութեան աղօթից
կը սկսին կատարել նաև եկեղեցւոյ օծման
հանդէսը ամենայն շքեղութեամբ: Գեորգ
հայրապետի բերած սրբազան նշխարաց մա-
սին, մեզ ծանօթ ժամանակագրութիւնն կը
յայտնէ, որ եկեղեցական հանդէսներն կա-
տարելէ վերջ, երբ առանձնացան արքայն և
հայրապետն արքունի ապարանից ընդարձակ
ոճանկաց միոյն մէջ, նոյն ժամանակ կաթմ-
զիկունս, անշուշտ յետ պտտմելոյ արարտ-
տեան աշխարհի թշուառութիւններն, բերել
կու տայ և իբրև նուէր կը զնէ արքայի զի-
մաց ք այն բոյոր սրբազան նշխարներն. և
արքայն՝ ստենելով սրբ անդին և հնուանդ
յիշատակները՝ մեծապէս կ'ուրախանայ, և

կը յանձնէ եկեղեցւոյ պաշտօնէից որ զայնս
յարգանօք պահեն ի սաճարին:

Ինչպէս Գեորգ հայրապետը, նոյնպէս և
այլ իշխանք և եպիսկոպոսոսը, Աղթամարայ
հանդիսաւոր աուտըց մէջ, զխոելով որ ա-
րարատեան գահը միշտ ենթակայ է թշա-
մեաց աւերման և կործանման, պատշաճ
կը համարին, անմատչելի և գերեցիկդիր
Աղթամարը՝ ընել կաթողիկոսական գահ բու-
վանպակ մեր աշխարհի: Այս դիտմամբ ա-
մենըը միաբանած կ'երթան յապարանս ար-
քային, ինչպիսիս իրմէ՝ սր իրենց մտածածը
կատարելու համանմա տայ: Արքունի արքայն,
իր թաղաւորութեան աշխարհի պատուաբեր
գործողութեան մը, ոչ միայն հաճութիւն կը
յայտնէ, այլ և մեծապէս աւրախացած կ'ա-
ռաջարկէ, որ իւր եղբորորդի, վերոյիշեալ
Տէր Էղիշէ արքեպիսկոպոսը ձեռնադրուի ա-
ռաջին կաթողիկոս Աղթամարայ: Արքայի
սաաշարկը ընդունելութիւն կը գտնէ յամե-
նեցուց, և մեծամեծ հանդէսներով Գեորգ
հայրապետը, նորակառօց սուրբ Խօշի տա-
ճարի մէջ, զՏէր Էղիշէ արքեպիսկոպոսը կը
ձեռնադրէ կաթողիկոս:

Գեորգ հայրապետի մասին մինչև ցարդ
մեր բաժններն կարելի է որ բանասիրաց
անվաւեր թուին, ուստի աստ պարզ կը
համարիմք ծանուցանել նոցա, որ մեր ոչ
համոզմամբ և հիմ առ նորասիրութեան, այլ
պարզ այդ նոր, վաւեր թէ անվաւեր, կտորն
ևս հասարակաց ծանուցանելու դիտմամբ յի-
շատակեցինք ի զրութեանս:

Աստ պատշաճ կը համարիմք ի մէջ բերել
ի հնուց Աղթամարայ թեմերու որոշման առ-

1. « Եւ քաղուճ եպիսկոպոսօք և վարդա-
պետօք և կրօնաւորօք եկն Գեորգ կաթողիկոսն
առ Գագիկ թագաւորն և հաստատեցին զսուրբ
Խօշը Աղթամարայ աթոռ Լուսաւորչին և ա-
մենայն Հայաստանեայց աշխարհի: Եւ եղև
ցնծութիւն և ուրախութիւն ամենայն աշխար-
հի: Եւ ետ ձեռնադրել Գագիկ զեղբորորդին
իւր զՏէր Էղիշէ կաթողիկոս, և ելև ուրախու-
թիւն թագաւորին »: Այսպէս գրուած է ի կրօ-
նակին. ապիւն քիչ տարբերութեամբ, Աղթա-
մարայ կաթողիկոսարանս քառասուրբ կը յեշտառու
կէ նաև ժամանակագիրն:

Թիւ գրուած յիշատակագիր մը, որ ամենայն ճշգրտութեամբ ընդօրինակուած է շարս զբր- շարաց վտանցս¹ :

Յազագս ամենայն քննից և վիճակիս մե- յոյ արտոյն Աղբամարայ սուրբ Խաչիս, որք յաստիպագոյն կարգեցին իշխանք Հայոց, հանդերձ Տէր Գեորգ կարողիկոսին, որ եկին ի հառակատիս սուրբ Խաչիև ի քուսա- կանին Հայոց ԳճՀ :

« Հայրապետն և իշխանք և Թագաւորն նըս- տան գառաստանաւ բաժանեցին զերկիրն. երկու մայրաքաղաք հասուցին Աղթամարայ, վանայ քաղաքն, Բաղէշու քաղաքն, յետ օ- ծելոյն Տէր Եղիշէ կաթողիկոսին և Եւ ասա- ցին. Յետ մերոյ անցման եթէ Տէր կամեցի յԷջմիածին վերստին հաստատութիւն լիցի, մի մարտնչեացն ընդ միմեանս աղթամարցիք և Էջմիածնիցիք : Քանզի Թագաւորն յոյժ ի- մաստուն էր, զամենայն բանս քննէր, ըզ- ներկայն, զանցեալն և զապառնին զամենայն խորհէր. քանզի յայնմ ժամանակի խիստ նեղէին զԷջմիածին աթոռն ազգն Պարսիս և Եւ ապա հրամայեաց արքայն նախ Տէր Գեորգ կաթողիկոսին : Դու բաժանեա, նոյնպէս իշ- խանաց :

Եւ Տէր Գեորգ կաթողիկոսն սկսաւ առել- Այս լիցի թեմ սուրբ Խաչ աթոռին. նախ ճուլամերկ, Նօսարք, Աղբակ մինչ ի ճարա- յու բերդն, Մահնդանք, վանայ քաղաքն իւր նահանգով, երկու անապատներն, Բեր- կուր զաշան իւր աթոռով, Բաջըբերունեաց գաւառն՝ որ է Արճէշ՝ իւր աթոռովն, որ է Մեծոփ, մինչ ի Ջիւանաձորն. Բզնուն եր- կիրն որ է Արճիկ իւր աթոռովն, այսինքն Աբասնէլագործ. Խնաթու նահանգն իւր ա- թոռով մինչ ի Ջրիտր զԻւզն. Գատվան մինչ հասանէ ի քաղաք Բաղէշ. Մշու երկիր մին- չև ի ճապաղուոր, Բաղէշ իւր նահանգով, գաւառն Աղձնեաց՝ որ է փայտի աշխարհն՝

այսինքն Գատվանայ մինչ ի զայ Բէլու՝ Աղձ- նիք կոյի, Համիւո երկիրն, Հայոց ձորն, Ոստան, Գաւաշ, Կառկառ, Եղեգիս, Կե- ցան, Հուրանց, Խիլան, Յերուն, Շիրվան, Սպարկերտ, Պոճուան մինչև Մուսուլ, Բար- սալի, Բարեղարեան, Շոտախ, Մոկու, Այս- քան բաժին շնորհեցին Աղթամարոյ ամե- նագով շնորհազարդ աթոռին : Այս է գոտտոս- տան մեծ հայրապետին մերոյ Տէր Գեորգ կաթողիկոսին, Գաղիկ Թագաւորին և ամենայն իշխանաց որք անդ կային, ամենեցուն հրա- ման զայս բան արարին, ուխտ և պայման գրեցին. Թէ որ այս ուխտէն և կանոնէն վե- ռայ անցին, թէ Աղթամարայ կաթողիկոս եթէ Էջմիածնայ, մէկն զեկուսն թեմն ըմբռա- նէ, նպովեալ լինի և մի մնացէ ի կարգի կաթողիկոսութեան և Բանդի վանայ քաղաքն և Բաղէշու քաղաքն՝ այս երկու քաղաքն հանկերձ դուաւորն զոր ասացաք՝ Աղթամա- րայ լիցի, միւս ընդհանուր Հայաստան Էջ- միածնայ լիցի : Եւ իբրև լուսն հոյք վար- զապետաց, զունդ ժողովրդոց, ասացին զա- մէնն. և արքայն յոյժ հաւանեցաւ : Անդ կային բազում եպիսկոպոսք, վարդապետք, իշ- խանք, յոյժ շնորհակալ լինին զարքայէն և զհայրապետէն, քանզի իմաստութեամբ դա- տաստան արարին : Չի ի վերջին ժամանակին ի նուազիլ և ի ճօրանալ երկուց աթոռոց, մի լիցի մին զմիւսն յաղթահարիցէ, մին միւսին թեմ գաւթէ՝¹, վասն այն կանոնի և զատաստանաւ փակեցին և նպովք զրին ի վերայ զի մի որ իշխուցէ լուծցէ զոս մինչև յաւիտեան և Եւ յետոյ ողջունեցին զմիմեանս և ելեալ գնացին ի տեղի զքօսանաց, զոր արքայն Գագիկ արարեալ էր » :

Յիշատակագիրս իբրև հետաքրքրական ինչ և ընթերցողաց Աղթամարայ հին թեմերուն զազափար մը տալու նպատակաւ, աստ ի ի մէջ բերելէ վերջ, կը մնայ մեզ այսուհե- սև զիտել թէ Աղթամարը ի՞նչ կեանք ուս- նեցաւ յետ արժանանալոյ և փառաւորութեա- ոչ միայն արքայական, այլ և հայրապետա- կան զահիս :

Շարայայրեյի

1. Այս յիշատակագիրն ընդօրինակած է մեր, Մեծ. Հ. Կերտէս վ. Սարգիսեան յԱղթամար, մեզ ծանօթ կոնդակ պարունակող զբնագրէն :

1. Թուրքարէն է, նշանակէ՝ գրասեղ :